

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

**«ՄՆՆՂԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀՈԴՎԱԾ 1. «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության 2006 թվականի նոյեմբերի 27-ի ՀՕ-193-Ն օրենքի (այսուհետ՝ օրենք) 8-րդ հոդվածի.

1. 3-րդ մասի «դ)» կետը լրացնել հետևյալ պարբերությամբ՝

«Պիտանիության ժամկետը կարող է չմականշվել հետևյալ արտադրատեսակների համար՝

- մշակման չենթարկված թարմ պտուղ և բանջարեղեն, ներառյալ կարտոֆիլ,
- 10 և ավելի ծավ.% սպիրտ պարունակող ոգելից խմիչքներ,
- պինդ շաքարներ,
- քացախ,
- կերակրի աղ.»:

2. 9-րդ մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 9.1-ին և 9.2-րդ մասերով.

«9.1. Արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծել և(կամ) Հայաստանի Հանրապետությունում իրացնել կամ հանրային սննդի ծառայության ոլորտում օգտագործել սննդամթերք, սննդամթերքի հետ շփվող նյութեր եւ սննդային հավելումներ, անկախ այն հանգամանքից, թե պիտանիության ժամկետի նշումն ինչ լեզվով է կատարված, որոնց.

ա) պիտանիության ժամկետն անցած է,

բ) ընդհանուր պիտանիության ժամկետի լրանալուն մնացել է 30 օրից պակաս, իսկ 120 օրից պակաս պիտանիության ժամկետ ունեցող արտադրանքի դեպքում՝ 1/4 - ից պակաս ժամկետ,

գ) փաթեթավորման կամ տարայի վրա պիտանիության ժամկետը բացակայում է կամ ընթեռնելի չէ,

դ) ժամկետը կրկնակի մականշված է կամ արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետը ջնջված է և նշված է պիտանիության նոր ժամկետ:

Սույն մասի «բ)» կետի պահանջը տարածվում է միայն Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի եւ սննդային հավելումների վրա:

9.2. Արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծված սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի եւ սննդային հավելումների հայերեն լեզվով մականշումը փակցնել արտադրողի կողմից նշված բնօրինակ պիտանիության ժամկետի վրա:»:

ՀՈԴՎԱԾ 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2012 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ ՀՀ կառավարության դիտողությունների և առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը, գրության ստացման ամսաթիվը, գրության համարը	Առարկության. առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունները
1	2	3	4
<p>ՀՀ կառավարություն</p> <p>ՀՀ կառավարություն</p>	<p>1. «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածը լրացնել նոր մասով՝ նշելով այն արտադրատեսակները, որոնց համար պիտանիության ժամկետը կարող է չմեծանշվել:</p> <p>2. «Սննդամթերքի անվտանգության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածով ներկայացված լրացման 11-րդ մասի վերաբերյալ առաջարկվում է՝</p> <p>1) առաջին պարբերության «ներմուծել եւ» բառերից հետո լրացնել «(կամ)» բառը, իսկ</p> <p>«սննդային հավելումներ, սննդամթերքի հետ շփվող նյութեր, սննդամթերքի բաղադրիչ մասեր, պարենային հումքեր, ինչպես նաեւ սննդամթերք եւ հատուկ նշանակության սննդամթերք» բառերը փոխարինել «սննդամթերք, սննդամթերքի հետ շփվող նյութեր եւ սննդային հավելումներ» բառերով:</p> <p>Նույնը վերաբերում է նաեւ 1-ին հոդվածի 12-րդ մասին:</p>	<p>1. Ըստ CODEX STAN 1-1985 (Rev. 1-1991)¹ Փաթեթավորված սննդամթերքի մականշման ընդհանուր ստանդարտի, առաջարկվում է նշել այն արտադրատեսակները, որոնց համար թույլատրվում է պիտանիության ժամկետը չմեծանշել, որպեսզի նախագծի 2-րդ հոդվածի բ) կետի պահանջն իրականացնելիս խնդիրներ չծագեն:</p> <p>1) Որպեսզի նշված արգելքը տարածվի նաև տեղական արտադրության սննդամթերքի վրա և ապահովվի «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի տերմիններին համապատասխանությունը, իսկ պարենային հումքը և հատուկ նշանակություն սննդամթերքն առանձին նշելու անհրաժեշտություն չկա, քանի որ, ըստ «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի, դրանք ևս սննդամթերք են:</p> <p>2) Որպեսզի պիտանիության ժամկետն</p>	<p>1. Նախագծի 1-ին հոդվածը լրացվել է հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «1. 3-րդ մասի «դ)» կետը լրացնել հետևյալ պարբերությամբ՝</p> <p>«Պիտանիության ժամկետը կարող է չմեծանշվել հետևյալ արտադրատեսակների համար՝</p> <ul style="list-style-type: none"> - մշակման չենթարկված թարմ պտուղ և բանջարեղեն, ներառյալ կարտոֆիլ, - 10 և ավելի ծավ.% սպիրտ պարունակող ոգելից խմիչքներ, - պինդ շաքարներ, - քացախ, - կերակրի աղ.»: <p>1) Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի առաջին պարբերության «ներմուծել եւ» բառերից հետո լրացվել է «(կամ)» բառը, իսկ 11-րդ մասի առաջին պարբերության և 12-րդ մասի «սննդային հավելումներ, սննդամթերքի հետ շփվող նյութեր, սննդամթերքի բաղադրիչ մասեր, պարենային հումքեր, ինչպես նաեւ սննդամթերք եւ հատուկ նշանակության սննդամթերք»</p>

<p>ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Արա Նռանյան</p>	<p>2) ա) կետից հանել «Հայաստանի Հանրապետություն ներմուծելու պահին» բառերը,</p> <p>3) բ) կետի պահանջի նկատմամբ ցուցաբերել տարբերակված մոտեցում և պահանջը տարածել միայն ներմուծվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի և սննդային հավելումների վրա,</p>	<p>անցած ապրանքի իրացման արգելքը տարածվի նաև տեղական արտադրության արտադրատեսակների վրա.</p> <p>3) Քանի որ պիտանիության ժամկետի մնացած 1/4 մասը կոնկրետ ապրանքի համար կարող է մեծ ժամանակահատված լինել, որի ընթացքում ներմուծողն իրավունք ունի և կարող է իրացնել իր կողմից ներմուծված ապրանքը, իսկ շրջանառության մեջ գտնվող սննդամթերքը մինչև պահման ժամկետի ավարտը կարող է իրացվել,</p>	<p>բառերը փոխարինվել են «սննդամթերք, սննդամթերքի հետ շփվող նյութեր եւ սննդային հավելումներ» բառերով:</p> <p>2) Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի ա) կետից հանվել է «Հայաստանի Հանրապետություն ներմուծելու պահին» բառերը,</p> <p>3) Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի բ) ենթակետի «ժամկետից անցել է 3/4-ից ավելի» բառերը փոխարինվել են «ընդհանուր պիտանիության ժամկետի լրանալուն մնացել է 30 օրից պակաս, իսկ 120 օրից պակաս պիտանիության ժամկետ ունեցող արտադրանքի դեպքում՝ 1/4 - ից պակաս ժամկետ,» բառերով, իսկ 2-րդ մասը լրացվել է հետևյալ նոր պարբերությամբ. «Սույն մասի «բ)» կետի պահանջը տարածվում է միայն Հայաստանի Հանրապետություն ներմուծվող սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող նյութերի եւ սննդային հավելումների վրա:»,</p>
<p>ՀՀ կառավարություն</p>	<p>4) երկրորդ պարբերությունը հանել:</p>	<p>4) Որպեսզի ժամկետանց արտադրանքի ներմուծման և(կամ) իրացման արգելման պահանջը տարածվի նաև արտադրական վերամշակման չենթարկված գյուղատնտեսական մթերքի վրա, քանի որ դրանք նույնպես կարող են լինել վտանգավոր:</p>	<p>4) Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի երկրորդ պարբերությունը հանվել է:</p>
<p>ՀՀ կառավարություն ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան</p>	<p>3. Առաջարկվում է լրացումը կատարել «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 9-րդ մասից հետո:</p> <p>4. Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի գ) կետի <աղավաղված է> բառը փոխարինել <ընթեռնելի չէ> բառով:</p>	<p>3. Որպեսզի չխախտվի «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հոդվածի 10-րդ մասի պահանջը:</p> <p>4. Ընդունվել է:</p>	<p>4) Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի երկրորդ պարբերությունը հանվել է:</p>
<p>ԱԺ պատգամավոր Արայիկ Հովհաննիսյան</p>	<p>5. Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետը սահմանել 2012 թվականի հունվարի 1-ից:</p>	<p>5. Ընդունվել է:</p>	<p>3. Նախագծի «11» և «12» թվերը փոխարինվել են համապատասխանաբար «9.1» և «9.2» թվերով:</p> <p>4. Նախագծի 1-ին հոդվածի 11-րդ մասի գ) կետի <աղավաղված է> բառը փոխարինվել է</p>

			<p><ընթերցման չէ> բառով:</p>
--	--	--	------------------------------------

5. Նախագծի ուժի մեջ մտնելու
ժամկետը փոխարինվել է 2012
թվականի հունվարի 1-ով: